

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

### ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

22.01.2018թ.

ք.Վանաձոր

#### Մասնակցում էին

- Ա.Դարբինյանը - մարզպետի տեղակալ
- Տ. Բադոյանը - մարզպետի տեղակալ
- Հ. Թադևոսյանը - մարզպետի տեղակալ
- Ն. Սարգսյանը - աշխատակազմի ղեկավար
- Վ.Խաչատրյանը - աշխատակազմի ղեկավարի տեղակալ
- Հ.Պապոյանը, Ս.Լամբարյանը, Մ.Սայադյանը, Ա.Զանազյանը, Դ.Մանուչարյանը, Ա.Շահվերդյանը, Ա.Օհանյանը, Վ.Սայադյանը, Ս.Ղուբաթյանը, Ա.Ադրյանը, Վ.Դոխոյանը, Ն.Համբարձումյանը, Հ.Մկրտչյանը - մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ
- Լ.Ասլանյանը - մարզպետի խորհրդական
- Ա. Սարգսյանը - մարզպետի օգնական
- Տ. Էվինյանը - մարզպետի օգնական

#### Օր ա կ ա ր գ ու մ

1. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների մասին  
/Ձեկ. Ն.Սարգսյան/
2. Պետական գերատեսչությունների կողմից տրված հանձնարարականների մասին  
/Ձեկ. Ա. Դարբինյան, Հ. Թադևոսյան/
3. ա) Բանակի օրվան նվիրված միջոցառումների մասին  
բ) Մայիսյան տոների նվիրված միջոցառումների մասին  
/Ձեկ. Մ.Սայադյան/
4. ա) Համայնքներում սեփական եկամուտների հավաքագրման մասին  
բ) Համայնքների ճշտված բյուջեների և սուբվենցիաների հատկացման փոփոխված կարգի մասին  
/Ձեկ. Հ. Պապոյան/
5. «Լոռի-Մարտակերտ» համագործակցության 2018թ. միջոցառումների ծրագրի մասին  
/Ձեկ. Վ. Խաչատրյան/
6. Դպրոցներում սմարթ դասարանների ստեղծման ծրագրի շարունակության մասին  
/Ձեկ. Լ. Ասլանյան/
7. Դպրոցներում և նախադպրոցական հաստատություններում ջերմային ռեժիմի վերահսկողության, մարզում ՍՇՎ-ի (սուր շնչական վարակ) մակարդակի մասին  
/Ձեկ. Ս. Լամբարյան/
8. Լոռու մարզի 2018թ. գործունեության ծրագրի մասին  
/Ձեկ. Հ. Մկրտչյան/

Այլ հարցեր

## Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց`

1. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալներ Ա.Դարբինյանին, Հ.Թադևոսյանին, Տ.Բադոյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետ Հ. Պապոյանին`

Անհրաժեշտ բացատրական աշխատանքներ տանել և մեթոդական աջակցություն ցուցաբերել համայնքների ղեկավարներին սուբվենցիաների տրամադրման կարգի պարզաբանման և ծրագրերի ներկայացման վերաբերյալ:

2. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Տ. Բադոյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Մ. Սայադյանին`

Հայաստանի Հանրապետության և Մայիսյան հերոսամարտերի 100-ամյակին նվիրված միջոցառումների կազմակերպման ու անցկացման նպատակով ստեղծել հանձնաժողով և համայնքներից ներկայացված ծրագրերի ամփոփումից հետո կազմել մարզային միջոցառումների ծրագիր, կազմակերպել ու վերահսկել դրանց կատարման ընթացքը:

3. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին`

Պետական գերատեսչությունների կողմից տրված հանձնարարականները դարձնել օրակարգային քննարկման հարց և լուծել սահմանված կարգով :

4. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Մ. Սայադյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ.Մանուչարյանին`

Համայնքներից ստացված տեղեկատվությունների հիման վրա ամփոփել և 1-օրյա ժամկետում ներկայացնել առաջարկություններ «Բանակի օրվան» նվիրված միջոցառումների վերաբերյալ:

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ



Ա. ԿԱԼԲԱՆԴՅԱՆ